

# ԼՐԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հունվարի 1 - մարտի 31, 2020թ.



ԻՐԱԶԵԿ ԶԱՂԱԶԱՑԻՆԵՐԻ ՄԻԱԿՈՐՈՒՄ

Հայկական մեդիա տիրույթում 2020 թ. առաջին եռամսյակում քարոզչական հիմնական թեզերն ուղղված էին գործող իշխանությունների դեմ պայմանավորված նրանց «ապաշնորհ» ներքին և արտաքին քաղաքականությամբ: Մասնավորապես, տարեսկզբին առաջ քաշվեց այն թեզը, թե երկրում անկառավարելի իրավիճակ է ստեղծվել, և իշխանությունների ոտքի տակից հողը փախչում է: Բնականաբար, Արցախյան բանակցությունների շրջանակում դաշտ նետվեցին մանիպուլյացիոն թեզեր իշխանությունների վարած վտանգավոր արտաքին քաղաքականության մասին, դավադրապաշտներն էլ հիշեցրին, որ «հողերը հանձնում են»: Ավելին, ընդդիմադիր շրջանակներում նկատեցին, որ այդ գործում վարչապետ Նիկոլ Փաշինյանին խանգարում են արցախցի նախկին «հերոս նախագահները», և հենց այդ պատճառով էլ նրանց քաղաքական հետապնդման են ենթարկում: Արդյունքում՝ լրատվամիջոցներում սկսեցին շրջանառվել ստալինյան ժամանակներին վերադառնալու, սուտ մատնությամբ քրեական գործեր հարուցելու, ազատ մամուլը ճնշելու և գրաքննելու թեզերը:

### ***Հիվանդասենյակ համար 6. «Երկիր-խենթանոց»***



2020 թ. առաջին եռամսյակը սկսվեց ողբերգական իրադարձությամբ. հունվարի 17-ին [հայտնի դարձավ](#), որ ինքնասպանություն է գործել ԱԱԾ նախկին տնօրեն Գեորգի Կուտոյանը: Մինչ իշխանական և ընդդիմադիր շրջանակներում փորձում էին վերլուծել, թե ում էր պետք Կուտոյանի մահը, տեղի ունեցավ մեկ այլ

անսովոր իրադարձություն. հունվարի 23-ին [տեղեկություն տարածվեց](#), որ «Էրեբունի պլազա» բիզնես կենտրոնում հնչել են կրակոցներ:

Ընդդիմադիր շրջանակներում այս երկու իրադարձություններն օգտագործեցին՝ պնդելու, որ Նիկոլ Փաշինյանի իշխանությունն ի վիճակի չէ վերահսկել իրավիճակը, և որ երկրում անկառավարելիություն է տիրում: Այսպես, երկրում իշխող բարոյահոգեբանական մթնոլորտը մեկ բառով [բնութագրեց](#) 3-րդ նախագահի փեսա Միքայել Մինասյանը. «...իշխանության ամենամեծ ձախողումը իր ամենապոպուլյար կարգախոսի բացարձակ ֆիասկոն է: Եթե այսօր որևէ կերպ կարելի է բնութագրել Հայաստանի մթնոլորտը, ապա դա «սեր և թավիշ» չէ: Ներկա թշնամական, անհանդուրժողականությամբ և ատելությամբ լիցքավորված հանրային տրամադրությունները խենթանոց են հիշեցնում», - գրել էր Մինասյանը ֆեյսբուքյան իր էջում:

Մինասյանի առաջ քաշած այս թեզը հաջողությամբ շարունակեց «Հրապարակ» թերթը, որը հունվարի 30-ին «Քաղաքական հիվանդասենյակ համար վեց» վերնագրով [հոդվածում](#) գրել էր. «Վերջին շաբաթվա Հայաստանը, այնտեղ զարգացող դեպքերն ու ներհասարակական կիզակետում հայտնված դեմքերն ավելի շատ հիշեցնում են ոչ թե նոր Հայաստանը, այլ խելագարների համար նախատեսված այն հիվանդանոցը, որն արևմտահայերը միամտորեն անվանում են «խենթանոց»»:

Նույն ոգով էր նաև «Փաստ» թերթի հունվարի 24-ի համարում լույս տեսած «Ատելության մթնոլորտի ծանր հետևանքները» վերնագրով [հոդվածը](#), ըստ որի՝ կատարվածն «ամենօրյա ռեժիմով իշխանությունների կողմից թշնամանքի և ատելության սերմանման» հետևանք է, արդյունքում «որևէ անձ, որևէ կառույց չի կարող իրեն ապահով զգալ»:

Հատկանշական է, որ հետագա ամիսներին «խենթանոցի» և անկառավարելիության այս թեզը թեև համեմատաբար թուլացավ, բայց առայժմ չի մարել և հարմար առիթի դեպքում պարբերաբար առաջ է քաշվում ընդդիմադիր շրջանակների կողմից:

## ***ՄԴ-ից «ազատվում ենք ազգովի»***

---

2020 թ. առաջին եռամսյակում մամուլում և սոցմեդիայում շրջանառվում էր դեռ նախորդ տարվանից սկիզբ առած այն թեզը, թե ողջ պետական համակարգը՝ իր բոլոր լծակներով, իսկ հետո նաև «ազգովի» (հանրաքվեի միջոցով) ձեռնամուխ է եղել Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանին հեռացնելու գործին:



Թեմայի շուրջ նոր ալիքը բարձրացավ այն բանից հետո, երբ Նիկոլ Փաշինյանը Կապանում հրավիրված մամուլի ասուլիսում [հայտարարեց](#), թե «հեղափոխությունից հետո Հրայր Թովմասյանն իր ծառայություններն է առաջարկել և մերժվել»: Նույն ասուլիսի ժամանակ Փաշինյանը խոստացավ և հաջորդ օրը [հրապարակեց](#) ասվածի ապացույցը՝ գրիչ, որն իրեն նվիրել էր Թովմասյանը, և որը վարչապետն ընկալել էր որպես քծնանքի նշան: Վարչապետին «Արմնյուզի» եթերում ծավալուն [հարցազրույցով](#) արագ արձագանքեց Հրայր Թովմասյանը: «...Ինչը մեզ չի սպանում, մեզ ուժեղացնում է... Այսօր ես ինքս ինձ չեմ հարգի, եթե այդ բոլոր ճնշումների պատճառով հետևահանջ կատարեմ այն գործից, որն ինձ է վերապահված», - հայտարարեց Հրայր Թովմասյանը՝ խոստանալով, որ մինչև վերջ գնալու է:

Հրայր Թովմասյանին էլ հենց հաջորդ օրը պատասխանեց Հանրային հեռուստաընկերությունը մի աղմկահարույց [ռեպորտաժով](#), որում, հղում անելով ՀԲԾ-ին, մանրամասներ էր ներկայացնում Թովմասյանի դեմ հարուցված քրեական գործից<sup>1</sup>: Ռեպորտաժը վարչապետը [հավանել էր](#), մինչդեռ Թովմասյանի փաստաբաններն այն [որակեցին](#) «զագրելի՝ իրավական, մասնագիտական և մարդկային տեսանկյունից»: Հանրայինի ռեպորտաժը դուր չէր եկել նաև մի շարք

---

<sup>1</sup> Հրայր Թովմասյանի դեմ [հարուցված է](#) քրեական գործ՝ պաշտոնեական դիրքի չարաշահման մեղադրանքով:

լրատվամիջոցների, որոնք դա դիտարկեցին որպես ՄԴ նախագահի դեմ տարվող պետական արշավի մի մաս:

«Թովմասյանին չեզոքացնելու նպատակին է լծվել նաև հարկատուներիս հաշվին գործող Հանրային հեռուստաընկերությունը, որը նախօրեին ռեպորտաժ էր պատրաստել Թովմասյանին առաջադրված մեղադրանքների վերաբերյալ՝ ներկայացնելով բացառապես վարույթն իրականացնող մարմնի տեսակետը՝ համեմված նախաքննական գաղտնիք համարվող տեղեկություններով», - [գրել էր](#) «Հրապարակը»՝ ընդգծելով, որ իշխանության գրեթե ողջ «գվարդիան» լծված է ՄԴ նախագահ Հրայր Թովմասյանին րոպե առաջ ՄԴ-ից հեռացնելու գործին:

Սոցմեդիայում էլ ընդդիմադիր շրջանակները Թովմասյանի դեմ գործող «իշխանական գվարդիայում» ներառեցին նաև նախագահ Արմեն Սարգսյանին, երբ վերջինս [ստորագրեց](#) ապրիլի 5-ին սահմանադրության փոփոխությունների հանրաքվե անցկացնելու հրամանագիրը<sup>2</sup>: Այսպես, «Իրավական ուղի» ՀԿ համահիմնադիր Ռուբեն Մելիքյանը \$եյսբուքյան գրառմամբ Արմեն Սարգսյանին [մեղադրեց](#) նախագահի ինստիտուտը ոչնչացնելու մեջ, իսկ ՀՀԿ խմբակցության նախկին պատգամավոր Կարեն Բեքարյանը նախագահի քայլը [որակեց](#) որպես «հանցանքի մասին ինքնախոստովանական ցուցմունք»: Արմեն Սարգսյանի դեմ սկսված արշավին առավել կոշտ բառապաշարով [միացավ](#) «Քաղաքացիական գիտակցություն» ՀԿ նախագահ Նարեկ Սամսոնյանը՝ եզրակացնելով, թե նախագահն այդպիսով «իր դագաղի վերջին մեխը խփեց»:

## ***Դեպի ավտորիտարիզմ***

Հրայր Թովմասյանի և ՄԴ շուրջ ստեղծված աղմուկի ամենաթեժ պահին իրավիճակի վերաբերյալ մեկը մյուսի հետևից հայտարարություններ տարածեցին ԵսեսՎ հայաստանյան մոնիտորինգի համազեկուցողները<sup>3</sup> և Վենետիկի հանձնաժողովի նախագահ Ջիանի Բուքիբին<sup>4</sup>: Ընդդիմությունն ու իշխանությունն այս հայտարարությունները մեկնաբանեցին սեփական հայեցողությամբ<sup>5</sup>. իշխանության ներկայացուցիչները շտապեցին ողջունել իրենց հարմար կետերը, իսկ ընդդիմադիր շրջանակներում էլ առանձնացրին առավել կոշտ գնահատականները:

<sup>2</sup> Փետրվարի 6-ին Ազգային ժողովն [ընդունել էր](#) Սահմանադրական փոփոխությունները հանրաքվեի դնելու մասին որոշման նախագիծը, որով առաջարկում է դադարեցնել մինչև 2018 թվի ապրիլի 9-ը ընտրված ՄԴ նախագահի և անդամների պաշտոնավարումը: Նախագծի Հանրաքվեի անցկացման սահմանադրականության վերաբերյալ առաջարկում ենք ընթերցել FIP.am-ի հոդվածը:

<sup>3</sup> ԵսեսՎ [հայտարարության](#) մեջ համազեկուցողները մտահոգություն էին հայտնում գործադիրի և ՄԴ-ի միջև լարվածության վերաբերյալ՝ ևս մեկ անգամ շեշտելով իշխանությունների տարանջատման սկզբունքի պահպանման կարևորությունը:

<sup>4</sup> Ջիանի Բուքիբին մտահոգություն [էր հայտնել](#) որ վերջին իրադարձությունները և հրապարակային հայտարարությունները չեն համապատասխանում վաղ կենսաթոշակի անցելու հարցում ՄԴ դատավորների կամավորության սկզբունքին:

<sup>5</sup> Այդ թեմայով առաջարկում ենք ընթերցել Fip.am-ի [հրատարակումը](#):

Ընդհանուր առմամբ, սակայն, միջազգային գործընկերների արձագանքը ընդդիմադիր շրջանակներում և լրատվամիջոցներում ակտիվացրեց այն թեզը, թե հեղափոխությունից հետո Հայաստանը հետ է գնում դեպի բռնատիրություն:

Այսպես, արդարադատության նախկին նախարար Արփինե Հովհաննիսյանը, Ֆեյսբուքի իր էջում մեկնաբանելով Բուքիթիոյի հայտարարությունը, [գրել էր](#). «Կամաց-կամաց մոտենում ենք հայտարարությունների այնպիսի կոշտության, որ սովորաբար գործածվել է Ադրբեջանի հանդեպ: ՄԴ լիազորությունների յուրացման նախագիծը հերոսաբար ավարտեք ու կստանաք նաև դա»:

Արփինե Հովհաննիսյանի այս գրառմամբ ոգեշնչվեց «168 Ժամ» թերթը: Վերջինս հենց հաջորդ օրը [հոդված](#) հրապարակեց՝ «Հայաստանը գնում է դեպի ավտորիտարիզմ. «դուխով» վերտառությամբ, որում, փաստացի, կրկնում էր Արփինե Հովհաննիսյանի միտքը: «Եվրոպական կառույցները Հայաստանի հետ արդեն խոսում են այնպիսի լեզվով, որով խոսում են ավտորիտար ռեժիմների հետ», - ասվում էր հոդվածում:

Ավտորիտարիզմի թեզն է՛լ ավելի ամրապնդվեց հանրաքվեի մասին որոշումից հետո. ներքաղաքական կյանքում դա որակվեց որպես ճանապարհ դեպի միապետություն: Այդ մասին առաջիններից մեկը [հայտարարեց](#) նախկին իշխող կուսակցությունը՝ ԶԶԿ-ն. «Առաջարկվող կարգավորումները գործադիր և օրենսդիր ճյուղերի կողմից Սահմանադրական դատարանը մեկուսացնելու և զավթելու փորձ են... Քննարկվող նախագիծն ուղղակիորեն հակասում է իրավական պետության, իրավունքի գերակայության և ժողովրդավարության սկզբունքներին»: «Ադեկվադ» միաբանության անդամ Լիլիթ Թումանյանն էլ [երկրորդեց](#), թե ՄԴ-ի շուրջ կատարվող իրադարձություններն իրավական չեն, այդ գործընթացում «մենք կորցնում ենք բոլոր ինստիտուտները, որոնք ապահովում են մեր երկրի ժողովրդավարականությունն ու սահմանադրականությունը»:

## ***Սկանդալաշատ քարոզարշավ***

---

Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի՝ այդպես էլ կիսատ մնացած քարոզարշավի նախորդող շաբաթը և քարոզարշավի ընթացքը ուղեկցվում էին աղմկահարույց իրադարձություններով և մանիպուլյացիոն պնդումներով: Նախ, ընդդիմադիր դաշտում [փորձեցին](#) համոզել, որ «այո ասելով հանրաքվեին՝ այո եք ասելու Ստամբուլյան կոնվենցիայի վավերացմանը, տրանսգենդերության քարոզին, բացարձակ բռնապետության հաստատմանը»: «Իրավունք» թերթն էլ հանրաքվեն [կապել էր](#) ոչ միայն Ստամբուլյան կոնվենցիայի, այլև «Արցախի հարցում այլանդակությունների» հետ: Ստեղծված իրավիճակում իր ընդդիմախոսներին նույն՝ մանիպուլյացիոն ոճով հակադարձեց ինքը՝

վարչապետը. քարոզարշավի մեկնարկի հաջորդ օրը նա [հրապարակեց](#) բարեկարգ և քանդված ճանապարհների լուսանկար՝ ակնարկելով, որ «Այո» ասողները կողմ են արտահայտվելու բարեկարգ ճանապարհներին:



Մանիպուլյացիոն քննարկումների տեղիք տվեց նաև իշխանությունների կողմից քարոզարշավի համար փետրվարի 25-ին կազմակերպված դրամահավաք-երեկոն, որի ժամանակ հանգանակվեց շուրջ 205 մլն դրամ: Մինչ իշխանության ներկայացուցիչները փորձում էին [պարզաբանել](#), որ դրամահավաքը ոչ թե «Այո»-ի շտաբի, այլ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախաձեռնությունն էր (հետևաբար, հավաքված գումարի հետ որևէ օրենսդրական խնդիր չկա<sup>6</sup>), մամուլում [պնդում էին](#), թե «դրամահավաքը քողածածկույթ է՝ լճիկներից հավաքվելիք չերևացող գումարները «լեգիտիմացնելու» և իրենց հավատացող ոչխարների աչքերին թող փչելու համար»:

Ակտիվ քարոզարշավի մեկնարկին էլ համացանցը բառացիորեն պայթեց, երբ «Այո»-ի քարոզարշավի ժամանակ երիտասարդ մի աղջիկ [պատռեց](#) Նիկոլ Փաշինյանի տված քարոզչական թռուցիկը և նետեց նրա վրա: Ժամեր անց վարչապետն իր Ֆեյսբուքյան էջում [մեկնաբանեց](#) կատարվածը՝ նշելով, որ միջադեպի համար նոր Հայաստանում աղջկա անվտանգությանը ոչինչ չի սպառում, և հենց դա էլ «Այո»-ի ամենամեծ հաղթանակն է»:

<sup>6</sup> Ըստ Հանրաքվեի մասին ՀՀ սահմանադրական օրենքի Յոթված 20, Մաս 1-ի՝ Հիմնադրամի հաշվին կատարված մուծումների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի 100 000-ապատիկը:

Վարչապետի այս թեզն ակտիվորեն առաջ մղեցին նրա քաղաքական թիմի [Ներկայացուցիչները](#), նրան սատարող [հանրային գործիչներն](#) ու [մամուլը](#): Մինչդեռ ընդդիմադիր ճակատում սկսեցին հերոսացնել աղջկան՝ միջադեպը վերագրելով ոչ թե Հայաստանի ժողովրդավարությանը, այլ աղջկա անձնական խիզախությանը: Այսպես, 7or.am կայքը աղջկա արարքը [որակեց](#) որպես «քաղաքացիական գիտակցության» դրսևորում, իսկ «Քաղաքացիական գիտակցություն» ՀԿ ղեկավար Նարեկ Սամսոնյանն անգամ պատրաստակամություն [հայտնեց](#) «խիզախ կնոջ» մրցանակ հանձնել նրան:

Ընդդիմադիրների աչքից չվրիպեց նաև Լոռու մարզի Կուրթան համայնքում քարոզարշավի ժամանակ տեղի ունեցած [միջադեպը](#), երբ վարչապետ Փաշինյանը կոշտ արձագանքեց տեղի բնակիչներից մեկի օգնության խնդրանքին. «առողջ տղամարդ ես, գնա՛ աշխատիր»: Վարչապետը քննադատությունների թիրախ դարձավ, երբ օրեր անց [պարզվեց](#), որ երիտասարդն ամենևին էլ առողջ չէ: Ու թեև Փաշինյանը [Ներողություն խնդրեց](#), բայց դա չհանդարտեցրեց կրթերը: Այդ \$ոնին ուշագրավ էր politik.am-ի հոդվածը, որում, մասնավորապես, ասվում էր. «... Փաշինյանի համար մարդը զրո արժեք ունի... Այս քայլով Փաշինյանը հրապարակային հրաժարվեց հասարակության այն շերտի խնդիրների լուծման պատասխանատվությունից, որոնց գործունե աջակցությամբ հայտնվել է վարչապետի պաշտոնին»:

## ***Արցախյան դավադրություն***

---

2020 թ. առաջին եռամսյակում Արցախի խնդրի կարգավորման հետ կապված տեղի ունեցան մի շարք կարևոր հանդիպումներ և իրադարձություններ, որոնք մամուլում և սոցմեդիայում արթնացրին քննադատներին և դավադրությունների սիրահարներին:

Դեռ տարիներ առաջ ձևավորված «հողերը հանձնելու» թեզը տարեսկզբին հերթական անգամ ակտիվացավ հունվարի 29-30-ին ժնկում Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների երկօրյա [բանակցություններից](#) հետո: Մասնավորապես, մամուլում և ընդդիմադիր շրջանակներում սկսեցին քննարկել, որ, ի հեճուկս պաշտոնական Երևանի հայտարարությունների, բանակցությունների սեղանին, այնուամենայնիվ, փաստաթուղթ կա, ընդ որում, փաստաթուղթը հայկական կողմի շահերից չի բխում: Այսպես, Նախկին ՄԻՊ Լարիսա Ալավերդյանը News.am-ի հետ զրույցում [պնդում էր](#), որ Նախարարների «Նման հանդիպումներն» այսուհետ ոչ միայն նորմալ չեն, այլև «հայ ժողովրդի ազգային անվտանգությանը սպառնալիք» են պարունակում: «Հրապարակն» էլ վտանգավոր տողատակեր էր [տեսնում](#) հանդիպմանը հաջորդած Հայաստանի ԱԳՆ [հայտարարության](#) մեջ. «տազնապի տեղիք է տալիս»:





Որոշ շրջանակներ էլ, այդպես էլ հողերը չհանձնող իշխանություններից հիասթափված, ասպարեզ նետեցին նոր քարոզչական թեզ, թե Արցախը բնակեցնում են ադրբեջանցիներով: Մասնավորապես, «168 ժամի» հետ զրույցում նման [վերլուծություն](#) էր արել ԱԱԾ նախկին պետ Դավիթ Ճահնազարյանը: Առաջ քաշված թեզը, չնայած ԱԳՆ-ի [հերքմանը](#), լայն տարածում գտավ (միայն 168.am կայքում՝ ավելի քան 17 հազար դիտում):

Հաշվետու ժամանակահատվածում Արցախյան հիմնահարցի շուրջ մանիպուլյացիոն թեզերի երկրորդ ալիքը բարձրացավ փետրվարի 15-ին Մյունխենի անվտանգության համաժողովում Նիկոլ Փաշինյանի և Իլհամ Ալիևի մասնակցությամբ պանելային [քննարկումից](#) հետո: Ընդ որում, թեման շահարկվեց երկու կողմերից էլ. իշխանականները պնդում էին, թե Փաշինյանն իր մեկնաբանություններով ստորացրել, «ասֆալտին է փռել» Ադրբեջանի նախագահին, ընդդիմադիրներն էլ հակադարձում էին. Փաշինյանը խայտառակել է Հայաստանը՝ չկարողանալով համարժեք պատասխանել Ալիևին<sup>7</sup>:

Այսպես, իշխանական «Հայկական ժամանակ» թերթը փետրվարի 18-ի համարում քննարկմանն անդրադարձել էր երեք նյութով («Ով ինչ ուղերձներ հղեց մյունխենյան «համայնքների մեկամարտում», «Առաջ շունչներս պահած սպասում էինք», «Հինը՝ նոր ձևաչափում»)՝ ընդհանուր առմամբ առաջ քաշելով այն թեզը, թե վարչապետը, միանշանակ, «Ալիևի պորտը տեղը դրեց»:

<sup>7</sup> Թեմայի վերաբերյալ առաջարկում ենք ընթերցել «Իրազեկ քաղաքացիների միավորման» [հոդվածը](#):

## **«Յերոսներին հետապնդում են, որ հողերը հանձնեն»**

Ընդդիմադիր ճամբարում մյուսխեսնյան հանդիպումից հետո կրկին ակտիվացավ «հողերը» հանձնելու թեզը՝ համեմված նոր տարրերով. այս իշխանություններին Արցախը հանձնել խանգարում են երկրորդ և երրորդ նախագահները, հետևաբար նրանց չեզոքացնում են շինծու քրեական գործերով: Այս թեզին խթան հաղորդեց նաև նախկին նախագահ Սերժ Սարգսյանը, որը փետրվարի 25-ին իր դատական նիստից առաջ բարձրախոսով [դիմեց](#) դատարանի դիմաց հավաքված համախոհներին. «Ես աշխարհի ամենաբարձր ամբիոններից պարբերաբար հայտարարել եմ, հիմա էլ կրկնում եմ՝ Լեռնային Ղարաբաղը երբեք չի լինելու Ադրբեջանի կազմում»: Ընդ որում, Սերժ Սարգսյանի համախոհները նույնպես դատարան էին եկել «Արցախը երբեք չի լինելու Ադրբեջանի կազմում» գրությամբ պաստառներով:

Երրորդ նախագահի քաղաքական հետապնդման մասին առաջինը [հայտարարեց](#) ՅՅԿ Գերագույն մարմինը. «Սերժ Սարգսյանի գործի շրջանակներում քրեական փաթեթավորմամբ իրականացվում է քաղաքական շարժառիթներով պայմանավորված գործընթաց: Հատկանշական է, որ այս դատավարության մեկնարկը տեղի է ունենում իշխանությունների՝ հանցավորության աստիճանի ապաշնորհ անվտանգային և դիվանագիտական գործունեության ֆոնին՝ Արցախյան բանակցությունների շուրջ ստեղծված համատեքստում»: Յետո հանրապետական առանձին գործիչներ ակնարկեցին, որ Սերժ Սարգսյանին տեսադաշտից վերացնում են՝ Արցախյան հարցը սեփական հայեցողությամբ լուծելու համար: Մասնավորապես, ՅՅԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը «Հայելու առաջ» հաղորդման ժամանակ [հայտարարեց](#), թե Սերժ Սարգսյանի՝ Չազրեբում ունեցած ելույթից<sup>8</sup> հետո իշխանությունների թիվ մեկ խնդիրն է դարձել նրան փակել Հայաստանում, որպեսզի միջազգային ամբիոններից չքննադատի գործող իշխանության քաղաքականությունը: Բացի այդ, ըստ Աշոտյանի, կա «անտեսանելի ձեռք», որը հետևողականորեն փորձում է պատժել և վարկաբեկել Արցախյան շարժման «հիմնական սիմվոլները»: Նույնը [պնդում էր](#) ՅՅԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովը 168TV-ի «Ռեվյու» հաղորդման ժամանակ. «Թուրքին ու ազերուն ծնկի բերած 2 նախագահներին դատելը մեր պետության և հասարակության ամոթն է»:

## **Արցախյան հարցը քարոզչական դաշտում**

Մինչ Հայաստանում դատարանի առաջ էին կանգնեցնում երկու «հերոս» նախագահներին, ռուսական լրատվականներում տարածվում էին ադրբեջանական քարոզչամեթոդաբանական շահերը սպասարկող հողվածներ: Դրանցից

<sup>8</sup> Դեռ 2019 թ. նոյեմբերին Սերժ Սարգսյանը ԵՏԿ ամբիոնից [քննադատել էր](#) Հայաստանի գործող իշխանություններին և հայտարարել, որ Արցախը երբեք չի լինելու Ադրբեջանի կազմում:

ամալել աղմկահարույցը Независимая газета թերթում տպագրված «Սումգայիթյան ողբերգություն. ինչի՞ց այն սկսվեց, և ինչպե՞ս է այն եղել» վերտառությամբ հոդվածն էր, որը հայկական կողմի ջանքերի արդյունքում շուտով հեռացվեց: Բայց մինչ այդ, ընդդիմադիր ճամբարում վստահեցնում էին, թե իշխանությունը Արցախի քարոզչական ճակատում էլ է տանուկ տալիս, քանի որ շփոթել է թշնամու գտնվելու վայրը և զբաղված է ներքին թշնամիներ փնտրելով:

Մասնավորապես, թեմային ծավալուն [անդրադարձ էր կատարել](#) «Արմնյուզ» հեռուստաընկերությունը: «Քարոզչական վեկտորը դրսից կարծես թե ներս է ուղղվել», - պնդում էր լուրերի մեկնաբան Աբրահամ Գասպարյանը: «5-րդ ալիքն» էլ փետրվարի 26-ի «Չայլուրի» գլխավոր թողարկմանն [ակնարկում էր](#), որ 90-ականներից այս թեման լռել էր և հիմա, «չգիտես ինչու, նորից ակտիվացել է»:

*Չատկանշական է, որ նույն օրը՝ փետրվարի 26-ին, Չանրային հեռուստաընկերությունը որևէ անդրադարձ չի կատարել ռուսական թերթում տպագրված հոդվածին: Չաջորդ օրը եղել է կարճ [անդրադարձ](#) այն մասին, որ Ռուսաստանում Չայաստանի դեսպանը բողոքով դիմել է Ռուսաստանի իշխանություններին: Թեման ծավալուն կերպով [լուսաբանվել է](#) միայն այն բանից հետո, երբ հայկական կողմի ջանքերով հակահայկական հոդվածը կայքից հեռացվել էր, և նույն կայքում տեղադրվել էր ադրբեջանագետ Տարոն Չովհաննիսյանի պատասխան [հոդվածը](#): Ի դեպ, հատկանշական է, որ այս դրվագն էլ դուրս է մնացել վերը նշված երկու հեռուստաալիքների լուրերի գլխավոր թողարկումներից:*

### **«Ապաշնորհ» արտաքին քաղաքականություն**

Արցախյան թեմայով կրքերի բորբոքման երրորդ ալիքը բարձրացավ, երբ մարտի 2-ին Թուրքիայի արտգործնախարար Մևլութ Չավուշօղլուն հանդիպեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ, որից հետո Թուրքիայի ԱԳՆ թվիթերյան պաշտոնական միկրոբլոգում [հայտարարություն](#) տարածվեց, թե ԼՂ հարցը պետք է լուծվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքի հիման վրա:

Չնայած այս ձևաչափով հանդիպումները երկար տարիներ պարբերական բնույթ են կրել, իսկ Արցախի հարցով պաշտոնական Անկարայի դիրքորոշումն էլ չի փոխվել, այնուամենայնիվ, թեման [չահարկվեց](#) «Ադեկվադ» միաբանների կողմից: Նրանց ֆեյսբուքյան [քննարկումներին](#) միացավ նաև Ռուսաստանի ԱԳՆ խոսնակ Մարիա Չախարովան՝ առաջարկելով կանչել Չայաստանի ԱԳՆ խոսնակ Աննա Նադդալյանի дyx-ը: Որոշ քաղաքագետներ ու լրատվամիջոցներ անմիջապես շտապեցին Չախարովայի օգտագործած дyx բառը ներկայացնել որպես «[հեզնական ակնարկ](#)»:

«Սա իհարկե պաշտոնական երևանին ուղղված ապտակ է, որի առաջնային պատասխանատուներն են ՀՀ կառավարությունն ու առաջին հերթին վարչապետ Փաշինյանը... Խնդիրը Հայաստանի կառավարության ապաշնորհության և ամենայն հավանականությամբ գործընկերների հետ բանակցությունները ձախողելու մեջ է», - [գրել էր](#) «Հրապարակը»:

Հայաստանի նոր իշխանությունների ապաշնորհ արտաքին քաղաքականության մասին ընդդիմադիր ճակատում հիշեցին նաև, երբ ԱՄՆ-ն [վերացրեց](#) Արցախին տրամադրվող օգնությունը: Արմեն Աշոտյանը, մասնավորապես, [եզրակացրեց](#). «Ակնհայտ է, որ սա Հայաստանի ներկայիս իշխանությունների կողմից տարվող սխալներով լի արտաքին քաղաքականության հետևանք է նաև»:

### ***Կորոնավիրուսի մուտքը Հայաստան***

---

Դեռ տարեվերջից ամբողջ աշխարհը լարվածության մեջ պահող կորոնավիրուսը 2020 թ. մարտին վերջապես հասավ Հայաստան: Կորոնավիրուսի առաջին դեպքի մասին վարչապետն անձամբ [հայտնեց](#), ապա [չեղարկեց](#) Մարտի 1-ի երթը, ինքն էլ ընտանիքի հետ մեկնեց Ծաղկաձոր, որտեղ հյուրանոցներից մեկում մեկուսացվել էին վիրուսի կասկածանքով մարդիկ:

Քարոզչական դաշտում վերը նշված իրադարձությունները շահարկումների առիթ դարձան: Ոմանք [այնդեցին](#), թե վիրուսի ներթափանցումը Հայաստան իշխանության հանցավոր անգործության արդյունք է, որոշներն էլ [ձայնակցեցին](#), թե գլխավոր «անգործը» պետք է մեկուսացված լիներ դեռ 2018 թ. ապրիլին:

Չնայած գարնանամուտին՝ ոմանց էլ անհանգստացրել էր հնարավոր վիրուսակիրների մեկուսացման վայրը՝ Հայաստանի «միակ ձմեռային կուրորտային քաղաք» Ծաղկաձորը: Քաղաքագետ Մենուա Հարությունյանը, օրինակ, [նկատել էր](#), որ Քոչարյանի ստեղծած կուրորտային կենտրոնը Փաշինյանը դարձրել է «համաշխարհային վիրուսակիրների կենտրոն»:

Իրավիճակի վատթարացումն ի վերջո [ստիպեց](#) Փաշինյանին մարտի 12-ին ընդհատել արձակուրդն ու քարոզարշավը և «զբաղվել կորոնավիրուսով»: Սակայն հենց հաջորդ օրը [պարզվեց](#), որ վարչապետն ընտանիքի հետ մեկուսացել է Սևանում և կորոնավիրուսի թեստ հանձնել:

Փաշինյանի ինքնամեկուսացումը ընդդիմադիր շրջանակներում որակեցին որպես փախուստ: Մասնավորապես, «ԿԵՏՕ»-ից Նարեկ Մալյանը զուգահեռներ [անցկացրեց](#) վարակի սկզբնաղբյուր Կուհանի փողոցներում քայլող Չինաստանի նախագահի և Սևանից լայվ մոտոդ Նիկոլ Փաշինյանի միջև: «Գիտե՞ք ի՞նչ տարբերություն կա իսկական առաջնորդի ու proxodимец-ի մեջ... Proxodимец-ը

ցանկացած վտանգի դեպքում իսկույն փախնում է ապահով տեղ»,- ասվում էր Մալյանի գրառման մեջ, որը լայն տարածում ստացավ նաև լրատվամիջոցներում:

Իսկ քաղաքագետ Միհրան Չակոբյանը [հայտարարեց](#), թե «մատը մատին չտալով՝ մորթապաշտ Փաշինյանը վիրուսը բերեց բաց թողեց մարդկանց շրջանում, հիմա իր ամբողջում առանձնացել ու արձակուրդն է վայելում»:

### **«Լրատվամիջոցներին ճնշում և գրաքննում են»**

Չաշվետու ժամանակահատվածում լրատվամիջոցների նկատմամբ ճնշումների մասին քննարկումներ սկսվել էին դեռ տարեսկզբին, երբ դատարանը վճռեց չփոխել «5-րդ ալիքի» սեփականատեր Արմեն Թավադյանի խափանման միջոցը<sup>9</sup>: Դրանից հետո «Իրատես» թերթը հունվարի 10-ի խմբագրականում [կանխատեսեց](#), թե 2020 թվականը կհռչակվի «լրատվամիջոցներն օրենսդրորեն «կարգավորելու» ժամանակահատված, որի ընթացքում չի բացառվում մի շարք հեռուստաընկերությունների լիցենզիաների «օրենքով» դադարեցում»:

Մամուլի վրա ճնշումների թեման կրկին ակտիվացավ, երբ համավարակային իրավիճակով պայմանավորված՝ մարտի 16-ին Չայաստանում [սահմանվեց](#) արտակարգ դրություն: Սակայն պարզվեց, որ այդքան սպասված արտակարգ դրությունից տուժում են միայն լրատվամիջոցները: Թեև այս առումով հնչեցին օբյեկտիվ քննադատություններ, այդ թվում՝ լրագրողական կազմակերպությունների կողմից արվեց համապատասխան [հայտարարություն](#)<sup>10</sup>, այնուամենայնիվ, որոշ քարոզչական շրջանակներ օգտագործեցին իրավիճակը՝ առաջ մղելու արդեն կարծրացած այն թեզը, որ Չայաստանում լրատվամիջոցները ճնշումների են ենթարկվում:

Ամեն ինչ ավելի սրվեց, երբ պարետատունը «Յրապարակից» պահանջեց հեռացնել «խուճապ առաջացնող» հոդվածներից մեկն այն մասին, թե դատապարտյալների շրջանում բուևտ է հասունանում: Դրանից հետո թերթը նեղսրտած [գրեց](#), թե «արտակարգ դրությունը մտցվել է ՉԼՄ-ներին զսպաշապիկ հագցնելու համար», իսկ թերթի խմբագիր Արմինե Օհանյանը [հիշեց](#) 1988 թվականը. «Ո՞վ կսպասեր, որ տասնամյակներ անց՝ 2020 թվականին, ես գրեթե նույն իրավիճակում կհայտնվեմ՝ որպես խմբագիր, և ստիպված կլինեմ պայքարել ազատ խոսքի մեր իրավունքի իրացման համար: Եվ ո՞վ կսպասեր, որ գրաքննության ջատագովը կդառնա իմ նախկին գործընկերը»:

<sup>9</sup> Արմեն Թավադյանը [ձեռքնապնակ է](#) դեկտեմբերին՝ Ռոբերտ Քոչարյանի ենթադրյալ աջակից Վարուժան Մկրտչյանին առնչվող քրեական գործի շրջանակում:

<sup>10</sup> Ավելի ուշ խմբագիրների, լրատվական կազմակերպությունների և միջազգային արձագանքների ճնշման ներքո կառավարությունը որոշակի փոփոխություններ [կատարեց](#) արտակարգ իրավիճակ հայտարարելու որոշման մեջ:

Թեման [քննարկվեց](#) նաև «5-րդ ալիքի» տաղավարում՝ լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ: Մասնավորապես, քննարկմանը «168 ժամ» թերթի խմբագիր Սաթիկ Սեյրանյանը կարծիք հնչեցրեց, թե «իշխանությունը, հասկանալով, որ պատրաստ չէ կորոնավիրուսին դիմակայել, փորձում է շեղել ուշադրությունը», Արմինե Օհանյանն էլ պնդում էր, թե իշխանությունը վարակի դեմ պայքարելու փոխարեն զբաղվեց վարակի մասին ինֆորմացիայի դեմ պայքարելով, որ տեղեկատվությունը լիարժեք չհասնի ընթերցողին: Ավելին՝ նրա խոսքով, «հայտնի ՊՈԱԿ-ի ամբողջ անձնակազմը և գումարած դրան քՊ անդամներ, պատգամավորների օգնականներ և խորհրդականներ նստած մոնիտորինգ են անում, և ով ինչ մուռ ունի լրատվամիջոցից՝ հիմա հանում է»:

Թեմայի վերաբերյալ մանիպուլյատիվ քննարկումներն ամփոփեց «Իրավունք» թերթը. «Ոչ մի դիկտատորի, էլ չենք ասում նորմալ կառավարության մտքով չի անցել, որ կարելի է պարզապես փակել տպագիր մամուլը: Բայց այս ապաշնորհ, անկարող, անփորձ ու հանցագործ իշխանությունները գնացին այդ քայլին, որովհետև վախենում են իրենց մասին ճշմարտությունը ի հայտ գալուց, վախենում են, որ օր առաջ պետք է պատասխան տան իրենց կատարած հանցագործությունների համար, այդ թվում՝ այսօր Հայաստանում ստեղծված խայտառակ իրավիճակի համար»: